

գուտ, մեր կարծեաց ու տեսութեան յաղթականձ  
Հանգիսանայէն, երբ ազգ չի մնար ականատես  
մեր փառաց. որուն պիտի ցուցարհներ մեր սկզբ-  
բանց հաստատուն ու ճշմարիտ ըլլալն, եթէ  
չման մեր լեզուն խօսողներ ու հասկողներ:

Ահա որ ապագան մեր գառաւորը պիտի  
ըլլայ եղբ, որուն հոգը, երբ ապագան կազմող  
արդի սերունդը կը փճանայ:

Վերջացնենք: Ապահով եմ թէ երկու  
կերպով պիտի ազգէ շարժապատկերս. նախ  
հայրենացիի խօսքերուս իմաստն չըմբռնող կամ  
ըմբռնել չուզողներ՝ պիտի նկատեն զիս նորա-  
քարոզ հակառակող ընկերավարականութեան.  
պիտի ջանան՝ ընկերավարականաց բառակոյտը  
թափել իմ դիմաց, ր պաշտպանութիւն սյն  
սկզբանց. Մարքս, Բեքէլ, Ժորէս եւ այլք հրա-  
պարակ պիտի հանուին: Փութանք ասոնց պա-  
տասխանը կանխել. ընկերավարականութիւնը չունի  
մեզի համար այն նշանակութիւնը, զոր կը կար-  
ծեն թէ ունենայ՝ մեր նորեկակ սոցիալիստները: Եւ  
ոչ անունն անգամ բերան կ'առնուի այս եւրոպա-  
կան քաղաքական կուսակցութեան, քանի որ աշ-  
խարհարարադարացիութիւնը կ'ընդունի իբր իւր  
զրոյնի վերահգիրը: Ես, գոնէ առ այժմ, միայն  
վասնզ կը նշմարեմ՝ այս կոյմնակցութեան  
սկզբունքները, մեր հայ ազգին: Ազգ ու տուն՝  
գաղափարները բնածին են կարծես ամէն մար-  
դու սրտին մէջ: Երկրորդ. գրական շահգէտի  
մը մէջ՝ թերթնական լեզուա գրել նիւթի մը  
վրայ, թերեւս հաճոյ չերեւայ շատ շատերու:  
Բայց գրական նիւթ մըն ալ պէտք է երբեմն  
համեմուի այս լեզուա, վասն զի միշտ ծանր  
նիւթեր կը պարտասեն նոյն իսկ ամենաառողջ  
ստամբար: Նիւթի ու հիւթի պէտպիտութիւնը՝ կը  
զորացնէ ու կը սրէ — գրական — ճաշակը:

ԹԱԹՈՒՆ ԱՆՍԱՆԴԱՅԻ:



ԹՐԻԿՆԱԿԱՆ ԵՐԻՐԳՈՅՆ ԲՆԱՍՏԵՂԹՆԵՐԸ  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ա.

ԼՅՈՒՍ ԳԱՆՈՒՈՒՄ, Չորսդէտ, Բերդ ու ջ կամ  
Գերեզ գետի աջ ու ձախ ափերին, մի փոքրիկ  
հարթավայրի վրայ, անդնդաբոր ձորերով ու  
քարափներով շրջապատուած, մի հայաբնակ գիւղ  
կայ Գոսեղ անունով. ահա այդ գիւղումն է ծնուել  
1869 թուին մեր Ժողովրդական շնորհալի բանա-

ստեղծը: Ձուտ հայեր են բնակիչները, մօտ 120  
տուն: Երկազորական մամը, հովուական ցուպը  
եւ որսորդական հրացանը կազմում են այդ բնակիչ-  
ների սրտի ու սիրտի պարապմունքը: Պայանկան-  
աւանդական ծեսերն ու սոյորութիւնները գեռ  
նահապետական պարզութեան ծայրում մնացել են  
անփոփոխ եւ անաղարտ այդ գիւղական ազգա-  
բնակչութեան խաւերում: Չնայելով որ ահագին աշ-  
խարհակործան կռիւներ, փոթորիկներ են անցել  
նրա կենսի սահմաններում, մանաւանդ Գաղղու-  
տանի լեզգիները վերջին արշաւանքների ժամանակ,  
Գոսեղը իրական անառիկ գիւղը ունի եւ արտաքին  
թշնամիները յարձակութիւններն զիմապաշտպանուե-  
լու յարմարութիւններ: Գիւղի յիշատակարան-  
ները՝ բազմաթիւ աւերակները այսօր էլ կարծես  
խօսում են անցորդների հետ եւ ցոյց տալիս թէ  
ինչ խառնութիւններ, ուր-ուրեք թշնամիներ  
են տեղի ունեցել այդ խոլ անկիւնում եւ ինչ-  
պիսի հետքեր են թողել կործանիչ ազգեցու-  
թեան տակ տնուր անցնալում: Շուրջը հնութեան  
նշանները են նոր արած պեղումներից երևում  
է, որ Գոսեղը եղել է հնուն ճոխ ու փարթամ,  
թաղուած հարստութիւնների մէջ, Բայց այժմ  
Ժողովուրդը խեղճացած է, հազիւ է կարողանում  
ապրուստի միջոցներ հայթհայթել: Գոսեղ միշտ  
նշանաւոր է եղել իր լէկիւններով-բազմաբարձի-  
ներով, որոնց դիւցալնական գովաբան սերտից  
սերունդ բերան է բերան անցնելով՝ միշտ երգուած է  
Ժողովրդեան յորինած խաղերով: Գոսեղ մինչեւ  
այսօր էլ զանգեցնելի սրտում վառ եւ կենդանի  
է մնացել յիշատակը այն անմահ հերոսի, որին  
Խ. Աբրահամը իւր "Վերջը Հայաստանի" ում գուր  
է բերում "ԼՅՈՒՍ ձորերի աստուածը, սարերի  
արծիւը, անտառների վազը", "Մեծակ հերթը  
էր, ասում է Աբրահամը, որ մի քարի գամակից  
ձէն տալիս, մի հանդում ուստ պալիս" հարիւր  
թուրքի լեզուն ջուրկարուի, աչքերը սեւանայ...":  
Քաջի նկարագիրը այսպէս է սխում մեր անմահ  
հայրենակցի իրականը. "Գոսեղիցի Մեհհարան  
Թումանյանից Երվանդի անունը քարերը սարա-  
փնջում էր: Սարերի, ձորերի միջում մեծացած,  
գազանի ու հարմա- արիւնը թափելով էր իրա  
սովորները հաստացել: Երկու տղամարդ նրա  
մէջքը շէկն կարող խաղտել: հինգ մարդ նրա մի  
ձեռքը շէկն կարող ուրբել: նրա գուրիւր մի որ շէր  
ցուել: Կերածը մեղր ու կարագ էր, հազածը  
շալ, կոխածը ծաղիկ, եւ կանաչ խոտով ծած-  
կուած աղբիւրների ու անտառի միջումն էր աչքը  
բաց աբել: նրան է՛նչ կը դիմանար: Աժգահայ եւ  
ոչ տղամարդ: Չորս գաղ ու կէս հասակն էր, գաղ  
ու կէս թիկունքի լայնութիւնը, կուրծքը, ապա-  
ուածի պէս հաստ. ամեն մի ձեռք մի սիւնի շափ-  
ամեն մի ոտքը մի կաղնու ճիւղը, պարանոցը մի  
ժառի բնի հաստութիւնով, երեսը՝ մազն եկել,  
կոխել երկու թղաչափ, նակատի տակին սեւ սեւ  
ունքերն էնպէս էին բռնել ու նրա արձուի աշ-  
քերն ու քիթը կոխել, ինչպէս կարկառախ  
ամպը ծածկում է գիշերուսն աստղերը: Ու՛՛՛՛՛ ի՛նչ  
բայր ունէր, մէկ քան զմիւրս ամօգահայ, ամեն  
մէկը հինգ-վեց որդի ունէին. շատի ոչ թէ հար-

սանք էին մեծակ նրանք տեսել, այլ թոռներն էլ մեծացել, առաջներին խաղում, սարն էին գնում: Դ Այնուհետև Արդիանք պատմում է հերոսի քաջագործութիւնները, թէ ինչպէս Քանաքեռցի Արասու եւ Հասան-խանի թուռը կռիւների ժամանակներում նա խոյանում էր առիւծի պէս լեզու գիւնքի ասպատակող արշաւանքների դէմ, գղբր-գեցնելով Լուսուայ վիթխարի ձորերը, շուրջը Հակայական յաղթանակներով աճ ու սարսափ տարածելով:

Այդ քաջ հերոսը մեր բանաստեղծի պայրի պայն է: Այն, ժամանակին թուամենեւնի տան օջախը շատ նշանաւոր եւ հիւրասեր է եղել ու մեծ ազդեցութիւն է հեղինակութիւն է ունեցել իւր բոլոր շրջապատի վրայ: Նա Լուսու հին ազնուական տոհմերին մէկն է, որն ունի իւր հետարքերի պատմութիւնը, բայց որի Լուսարանութիւնը երկար լինելով՝ մեր նպատակից դուրս է եւ զրա համար թողնում եմ միայլ անգամի: Բանաստեղծի անուանակից պայր՝ Յովհաննէսը, Յովակիմի որդին, եղել է նոյնպէս քաջ տղամարդ եւ զինուորական՝ յայտնի Դարդասանի պատերազմներում: Բանաստեղծի մանկական կեանքի վրայ լաւ եւ խոր տպաւորութիւն է թողել նրա հայրը, Տէր Թադէոսը, նոյն գիւղի քահանան, այժմ վախճանուած: Նա շատ ազնիւ մարդ էր, հիւրասեր, առակախօս, զուարճարան, վարժ հրացանակից եւ ձի-նստող, Գիտեր եւ լնդուր անել, երբում էր որդու ներկայութեամբ եւ հաւաքուած գիւղացիների մօտ անցած դարձանների մասին իրացական գեղջեր առ զէպքեր: Երբում էր եւ Քեօրոզին, Քեարասը եւ հոգեւոր երգեր: Այդ երգերը Յովհաննէսի մանկական մտքի վրայ խորն էին տպաւորուած, որ յետոյ հասունանալով եւ բեղմնաւորւելով՝ եւս կարողացաւ պատանեկական եւ երեսասարդական հասակում տալ ընթերցողներին ձեռքը ոսկէ շղթանակների մէջ Իււււ՝ իւր մանկույց լաւժ ժողովրդական հէքիաթներից, առակներից ու աւանդութիւններից այնքան սիրուն, գողտրիկ եւ հմայիչ բանաստեղծական շարահիւսած փնջիկներ: Հայրն էր, որ գրեց

որդուն դէպի կրթական դորձը: Տարտարեկան է եղել Յովհաննէսը, որ հեռացել է հայրենի գիւղից Զայալույի եւ տարրական ուսումը սկսել Տիգրան վարժապետի մօտ: Այնուհետեւ նա անցել է Ներսիսեան դպրոց, շարունակելով ուսումը մինչեւ Դ. րդ դասարանը: Նա աշակերտութեան ժամանակ ոտանաւորներ էր դրում: Աւուսցիները քանիցս անգամ նկատում են նրան, որ նա թուրքաձ դասը ուշադրութիւնը կենդանացնում է ուրիշ տեղ: Վերջը գլխի են ընկնում եւ ձեռքին խլում «գաղտնի», տեսարակը, որ լցած է լինում երգիծարանական, հայրենասիրական եւ սերային ոտանաւորներով: Մի քանի անգամ այդ տեսարակը ներկայացնում են տեսչին եւ նկատագրութեան տակ առնում: Սակայն նա շարունակում է նոյնը մնալ: Արքան խնդրում է նկատող ընկերներին, որ ոչինչ չլայտնեն այդ մասին դաստառ ուսուցիչներին, հնար չի լինում գնալով նկատողութիւնները ստատկանում են եւ սուր կերպարանք ստանում: Ստիպուած նա թողնում է դպրոցը, գալով, որ միայն չոր ու ցամաք դասագրքերի վրայ անցնել-սովորել մի մեքենական տաղալիայի եւ ձանձրակաշխատանք է, այդ չէ իր կոչումը, այդտեղ նա շկարու բաւարարել, գոհացում տալ իւր ներքին մղող բնական հակմանը, այն է՝ բանաստեղծութեան նուիրուելուն: Եւ



Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ը Մ Թ Ո Ռ Մ Ա Ն Ծ Ա Ն

աճա մնում, զարգանում է նրա մէջ բանաստեղծական վերական անպայման տաղանդը եւ լոյս են տեսնում Մոսկուայում երկու հատոր բանաստեղծութիւնների, առաջինը՝ 1890 երկրորդը՝ 1892 թուին:

Առաջին գիրքը, 98 էջ, բովանդակում է իւր մէջ 23 ստանաւոր, որոնցից միայն շք թարգմանական են՝ Պուշկինից՝ Եթէ իրու է, որ գեղեցմանները, եւ Լեբմնառոյց «Իրձ», Այդտեղ յաջողած ենք գտնում հետեւեալ ստանաւորները՝ «Արեւ եւ լուսին» (ժողովրդական աւանդութիւն), «Ամառնային գիշերը գիւղում», «Հերթը, ո՛վ կոյս, որ զպէցի», «Գիշերային առաջին ստաղի զիմաց», «Չարամիտներին», «Մարգարէ», խաղացած հաս ու կտոր ստանաւորները կարծես գրուած

են բանաստեղծի բունագրով ոգեւորութեան եւ ակամայ տրամադրութեան տակ: Սակայն այդ հասարակ ուշագրութեան արժանի է այն պատճառով, որ նրանում մենք հանդիպում ենք երեք ընտիր պոեմաների՝ «Լուսնի Սաքո», «Ալէք» եւ «Մեհհրի», Գրանթացնեք ընթերցողներին այդ պոեմաների բովանդակութեան հետ եւ տանք մեր նկատումները:

**Բ.**

Սաքոն, լեռնակնայ այդ մարդը, Լուսնայ ձորերի այդ «անվախ» (?) հովիւր՝ լինելով բնութեան հարազատ որդին, գուրբ-չլուսն է իւր կեանքը անցկացրել, իւր գլուխն ու կողքը հաստացրել: Մի գիշեր խոր ձորի մէջ, մի տնակում նա մեռակ է, իւր հաստարիմ վրէժ, մի տնակում նա գիշեր նա ընկերին տուն է ուղարկել: Խորին լուսթիւն է տիրում ամայի ձորում, եւ փարսախում, ուր գեանին պառկած Սաքոն մեն-մեռակ կիսանիջը քնի մէջ մտածում է եւ յանկարծ գիշերուայ կիսին երեւան են գալիս մինը միւսի յետեւեղ նրա յիշողութիւններում իւր աստի պատմած ուխտը, շարժել կամ փոխել զանազան խառն ի խառն ձեւակերպական պատկերներով, երբեմն ծուռը ոտքերով, այլանգակ գէմքի ծածածու թիւններով երբեմն թուրք կանանց կերպարանքով, տարազով:

Կամ թէ ուշացած անցնում են ձորով, խաքում են կանչում ծանօթ ձայներով Եւ մարդկանց նման խնջր են սարքում, Չուռնայ են անում, թթուկ են գարկում:

Կամ Սաքոի երեւակայութիւնը բուրբուրի վառած, զրգաւած՝ տգեղ եւ անհեթեթ շարքերով սկսում են «եայլին» պարերը եւ չաւ ու յաւած աչքերով գալիս կանգնում են նրա դիմացը՝ երկիւղի տարուած շնչելով նրա կրծքի մէջ:

Նրանապաշարուած Սաքոն անպայման հաւատում է այդ ոգիների չարութեանը, այդ նա լսել է տասնից մանկութեան օրերում մի բիշ ուշաբերուելով բացականչում է՝

«Ո՛վ է հոգ թափում այս Բուխուրակից...  
Վա՛հ... այն ո՛վ է... այն ո՛վ է երգիկից  
Գիւական ծիծաղոյ երեսին նայում...  
Պըզած աչքերն ի՛նչպէս են փայլում...»

Եւ նա կանչում է ընկեր Գեվօրին, կարծելով՝ նա կը լինի տանից վերադարձած եւ մթան մէջ այդպէս անժամանակ դիտուարութեամբ իրեն վախեցնողը: Բայց նրա ակունքն դժոխային խաւարի միջից խոլ Զորազեան ձորերում արձագանգ առլիս: Եւ երբ տեսնում է պատասխան չկայ, նա, որ ժողովրդից Քաղութեան համար ինչին անունն էր ստացել, նա, որ իւր կեանքում վախ չէր գրացել եւ չգիտէր ինչ բան է այն, նա, որ գայլերին ամբողջ զհամակներով մի ձեռքի ասպանակով էր ջրում, նա, որ թուրքերի բիթն ու պուռնին էր շարքում, յանկարծ ստուրմ, վախեանում է, մասքեր փշաքաղում եւ սարսափահար փախուում փա-

րակից, այնպէս կարծելով երեւակայութեամբ հմայուած, թէ զուռն ու երգիլը, շար ոգիներ են շրջապատած եւ քայլ առ քայլ հետեւում են իւրեն՝ վրէժխնդիր լինելու համար: Նա մինչեւ անգամ զուռն էլ չէ հանգստանում, դարձեալ խաւար գիշերներին թափառում է ձորերում, վերջը խելագարուած է, որովհետեւ այնտեղ էլ Զորազեանց աւքերն են թռչում, յետեւից կանչում՝ «Բուռեցէք, Փախա՛ւ Սաքոն խելագար... Պոեման վերջանում է այս տղերքով՝

Սագուն է Սաքոն. այն ինչ այդ ժամին  
Սաքոի նմը — պառնու Նազանին  
Փոքրիկ թռաներին տեսած ու լսած  
Քաջքից է պատմում շատ ոգեւորուած.  
Իսկ առաւօտեան նրան կնիզային  
Խելագար Սաքոն վկայ կը կազմի:

**Գ.**

Ահա «Լուսնի Սաքո» պոեմայի ամբողջ բովանդակութիւնը: Նիւթը, ինչպէս տեսնում էք, դիւցազնեղական է, բայց հարց է ծագում, թէ հեղինակը արեւօք ի՛նչպէս է վարուել իւր հերոսի հետ եւ նրա տիպը ի՛նչպէս է ամբողջացրել: Ճիշդ է նկատել լէտն, որ Վ. Միքայելան իւր «Լուսնարի որդ» պոեմայում Աւաք-որակաի տիպը աւելի լաւ է ամբողջացրել, քան Յովհ. Թումանյանը՝ իւր Սաքոն (Տես «Թուսնայ գրականութիւնը»): Պոեմայի սկզբում հեղինակը յայտնում է, որ Սաքոն ինչին անուրբ ստացել է, ժողովրդից, բայց չի երեւում թէ ինչ բանի մէջն է կայանում նրա այդ ինչին-ինչը: Սակայն չեն բերում այնպիսի գործողութիւններ, դէպքեր եւ տեսարաններ, որոնց մէջ երեւան զար Սաքոի, որպէս ինչին, յայտնական-հերոսական տիպի յայտնագործումը, այլ միայն բաւականանում է բանաստեղծը այն մի քանի ասպիտակ խոսքերով, թէ «գայլերին վա՛հ մակներով ջրում էր մի ձեռքի դառանակով» եւ «թուրքերին վախեցնում էր զրա համար ինչին անունն են տալիս: Բայց Սաքոն մեզ սաստիկ յիշեցնում է «լեռը թնդաց եւ ծնեց մի մուկ», Բանաստեղծը ասում է, որ Սաքոն անվախ է, չգիտէ ի՛նչ բան է վախը, բայց բանից զուրս է գալիս, որ Թումանյանին Սաքոն ոչ միայն ինչին է, այլ եւ իւր ինչին էլ փոխու է: Քաջքերից վախեցող մարդը ի՛նչ հերոս կարող է լինել, որքան էլ տարուած լինէր նա նրանապաշարուններին ազդեցութեամբ: Մի հերոս, եթէ չի վախեանում գայլերից, գոյաւից եւ մահ ստանալուց, նա ի՛նչպէս կարող է կամ ի՛նչպէս թող կը տայ իւր ինչին վա՛հ ինքնասիրութեան հանդէպ՝ անպարտաւոր քաջքերից վախեանալ եւ խելագարուելով ձորերն ընկնել: Խելագարուել... այն, այն դէպքում, եթէ է, օրինակի համար, մեկ ինքնակեր արեւը անմեղ թափելիս լինէր եւ նրա ուրախանքը սկսէր գիշեր ու ցերեկ հետեւել նրան ու ինչին խոլը հալածէր, հանգստութիւն չտար... Բայց այդպիսի բան չկայ պոեմայում: Ինչին... ի՛նչ սակ է ինչին. որտեղ է երեւում Սաքոի ինչին լինելը, մի՞թէ քաջքերից սարսափահար փախալող ինչին է: Եթէ է, յիւրաք, ինչին է Սաքոն, այն

էլ «վեհանան», իգիծէ, հապա ինչև պօեմայում որևէ տեղ յիշուած չէ, որ նա ժողովոյի կեանքի համար ցոյց է առելն աննուիրութեան օրինակ կամ կռուի բռնուել յանուն հայրենիքի բարօրութեան, Պօեման աւելի արժէք կ'ունենար, եթէ նա գրուած լինէր աւելի գաղափարական-հերոսական տիպի շքանակում քան նա գրուած է քաղցրից ստացած հիւանդոտ, անմիտ գուռանցանքների մէջ: Լասկանուի է, որ հեղինակը գրածով ուղեցնէ է երեւան հանել մեր Տասարակական հիւանդ կողմերից մէկը՝ Նոթոգալուրմանի զու: Ով չգիտէ, որ նախապաշարմունքները շատ վատ են ազդում մատաղ սերնդի վրայ եւ պէտք է գրանցուի զինուել: Բայց լ'նչ հարկ կայ քաղցրից վախճող մի խաւարափառ ապուշի գուրս բերել կէկէ, կարծես միայն նրա համար, որ նա անպարտաւ լիակնուում է քաղցրից եւ իւր կեանքում ոչ մի քաջագործութիւն չի արել եւ ոչ մի տեղ չի երեւայ նրա «վեհանանութիւնը»: Սաքօի ներքին աշխարհն էլ պատած է մշուշով. չկայ պօեմայում հոգեբանութիւն: Պօեմային կենդանութիւն տուող բնութեան զեղեցիկ նկարագրութիւններն են սակայն: Դրանց մէջ Թուամաները շորհար է: Դուք կարդում էիք այդ նկարագրութիւնները եւ տպաւորուում: Մի տեղ սարի տեսարանների նկարագրութիւնն է ձեր ուշը գրաւում:

Գեռ նոր Ազամայ մութը փաբառած եւ հորիզոնից գեռ կամոց-կամոց նոր է լուսաստղն երեք հանում, Որ Սաքօն ոչխարն արտա է առնում:

Շքեղազալար լեռանց թաբմ օդը եւ շաղափափախ ծաղիկն ու խորը, Անյայտ գրախտի կնգրուկի նման, Անոյշ բուրմունքով, շնչով կենսական, Լքում է կուրծքը, վերացում հոգին: Ի՞նչը կը հասնի Սաքօի կեանքին. Անն առաւօտ տեսնում է, ինչպէս Արեւելքումը շքեղահանգէս, Ամպերի միջից արձնաթոր եւ թուր Բացում է արշալոյսն, ինչպէս հրաբուխ կամ թէ բոցափայտ հրէհի նման, Որ թանձր ծխից յայտնում է իրան. Եւ առաջին շողն արեւազալար, Երբ որ ընկնում է լեռանց կատարին, կարմրին տալով, ասես թէ քրքում, Վէս գագաթները վարդաբանգ ներկում, Այն ինչ, գեռ նոր է մութը նահանջում, Միգապատ լեռան բարձրագէշ լանջում Այս ժամանակին մեր Սաքօն կանգնած, Հովուական երկայն մահախին յենուած. Գլխարկը ծաւած, ետախնու ուսին, Շիկնած, կարմրած վառ արեւ լուսին.



Յ. Յ. Ո Վ Ն Ա Ն Ն Ս Ս Ա Ն

Սեգ ու վայրենի հայեացքը մեխած, նայում է, երկին տեսքով գնայլած. կամ թէ ոչխար վերեք թիկնը Ցուած, անում է իրան սրնոգը. կամ ժայռի գլխին բարձր սեւնաձեւ Արծուի հայեացքով նայում է ներքեւ, Այնտեղ, խորին, մթին սնդոնում Գետը զայրագին գոռում է թնդում...

Մի տեղ ուժգին փոթորիկն է մանուած սարի ծմակներում:

Սեւ սեւ ամպեր են գալիս հաւաքում. Մթնում է երկինքն ու փայլատակում, Սառած, սասանած երկիրը վախից Ուրում է կարծես փախչել իւր տեղից. Եւ թանձր անտառը, սաստիկ հողմակոծ, Երբ փշշացնում է, ինչպէս մի սեւ օձ, Թեքում է, տըքում ծառը հասարամաս, Ամբողջ ծմակը հեծծում յուսաստաւ Գոռում են ամպերն մթնած երկրից, Գետինը գողում, շարժում է հիվերց. Ապա երկինքը, պատառուած կարծես, Հեղեղ է թափում կօժով ջրի պէս, Հեղեղ, որ պէտք է քու աչքով տեսնես, Շիթ երեց բունես, երկինքը հասնես — Սաքօն ոչխարը ծմակն է քաշում, Մի տերեւախիտ ծառի տակ կանգնում. Եւ հեռուում է հանգիստ հայեացքով

Թխպոտ ամպերին, որ յամբ ընթացքով Գնում են դեռ-դեռ, խառնում, կուտակում. Սեւ ծոցի միջից շանթեր արձակում: կամ գաշտի միջին, քարի կողքը մտած, Հին հրացանը մահալը խորտած. Ու գլխին քաշած մաշուած ետախնին Անխող լուսն է. նրա տկանջին Խառնայն հասնում են որսոն ամպերի, կայծակի ճայթիկն, վլացն անձրեւի, Ազատ է, ազատ բնութեան օրդին, Միահաւասար մտ են նրա որսին Բնութեան բուր տեսք ու ձայները. — Թէ տկանակիր մթնազրինքը, Թէ խաղաղ, շքեղ գարնան առաւօտ, Ազդերի խոխոջ, կայծակի սրտ... Ան, մարդու լեզուն տկար է, տկար, Բնութեան տեսքը պատմելու համար, Բայց նրա հոգին, երբեմն անարգել, Երկինք ու գետինը կարող է գրեկ... Մի տեղ Սաքօի սիրային երգն է լուսն հովուական սրնդի երեւելների վրայ՝ բնու-

Թեան հրաշալիքների ներդաշնակութեան մէջ . —

... Եւ մերամոռնոտ նրանց բայ-նին  
Գոփեաւ եւ տալիս վիճանն իբր թիւն,  
Կամ հայրենիքի հողին ու քարին,  
Սիրաժառ կանչում սեւաշեւայ եարին.  
Եւ ամեն մի ձայն այն երգում այնքան  
Պարզ է եւ զօրեղ, այնքան բնական,  
Որ մարդ նոյն ժամին, կարծես, սրտովունդ,  
Ենթում է իջնում երկինք ու անդունդ...

Մի այլ տեղ Լուսույ ահոյեի ձորն է ձեր  
առաջ եւ այնտեղ Գերեզ գետն է շառաչում  
մրմունջներ . —

... Այն Լուսու ձորն է, որ հանդիպակաց  
ժայռերն ունի, ոտքերը կիտած,  
Դէմ ու դէմ կանգնած, յամու եւ անթարթ  
Վայեացքով իրար հայում են հանգարտ:  
Սեւ ծովի նման մլոր կանգնած  
Գրկում է դրանց կուրծքը կախ ընկած,  
Որ, կարծես, ահա, հէջ այս վայրկեանին  
Վայր կ'ընկնեն անահ հանգորի գլխին:  
Ահոյեի ձոր է. այնտեղ Գերեզը  
Փոքրած վազում է: Մերթնաց գետը  
Գոռում է, ինչպէս վիթաւ որ գազան.  
Եւ աղաղակին այն երկրասասան  
Խոր, լայնաբերան քարանձաւները  
Ազում են իրանց փռվի ձայնները,  
Կազմում վայրենի ներդաշնակութիւն:  
Սարսափ է ազում անսովոր մարդուն:  
Գիշերը լուսնի երկնոտ շողերը  
Երբ որ ընկնում են այն ահէջ ձորը,  
Եւ ալքերի հետ խաղում զողալով,  
Իսկ ալիքները գետի շողալով  
Յուզում են, իրար յետեւից փախչում,  
Գերեզը խաւար անդունդի խորում,  
Մի արծաթափայլ նեղ շերտի նման  
Պտոյտներ աւած ձգում է երկայն...

Սրանք յաղոջ նկարագրութիւններ են,  
զորոնք կարգալով զուք գզում էք, որ ձեր առաջ  
կանգնած է մի իսկական բանաստեղծ՝ բնութեան  
նկարագիրներին կենդանութիւն տուող, սակայն  
միւս կողմից փոստում էք, որ այնքան զոգտրիկ  
նկարագրութիւնները յատկացուած են մի «երկ-  
շտոտ նապաստակ», եւ ծիծաղելի հերոսի, որ  
«երեւակայական վիճաններութիւն» ունի եւ «ան-  
սայտ, մուշապատ քանազակայան ոգի», Չնայած  
մի քանի թերութիւններին, «Լուսեցի Սաքօն»  
ուշադրու է, որովհետեւ նրանում կան այնպիսի  
յաղջուած կտորներ, որ նրա արժէքը բարձրա-  
ցնելուն են ծառայում:

Անցնենք «Մեհրի» պոեմային:  
(Ըրտնութիւն) Գրիոր ԲԱՄԱՍՅԱՆԻ



Ս Ա Ս Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՎՐԹԱՆԵՆԷՍ ՎԱՐԳԱՎԱԳՆՏ ԳԵՐԳՈՂ  
ՅԻ ԻՐ ԵՐԳՍԻՐԻԹԻՒՆՆԵՐԸ

Մեր անցեալ պատմութիւնը եւ գրականու-  
թիւնը գեռ կը մնայ terra incognita, որուն ի  
խնդիր որչափ յառաջենք, այնչափ կը պարզուի  
մեր առջեւ նորանոր երեւոյթներով: Այս «ան-  
ձանօթ աշխարհին» կը հայի առաջիկայ քննու-  
թեան առարկան. որուն մասին յայտ մեր ըն-  
թերցողաց անհաւատալի շեմունի թող այն  
ամեն յայտնութիւնները, զորոնք պիտի հաննը  
յերեւան:

Ո՞վ է Վրթանէս: Չուր է այս մասին պա-  
տասխանի ըմ ակնկալութիւնը մեր Սահադն կամ  
նորագոյն մտնաագիրները. այնպէս ոչնչէ առն-  
գում է, հակառակ իր մեծ անձնաւորութեան:  
Իւր անունը լաւ ծանօթ է Հռոբէյն ընթերցողաց  
Վրաց Բաժանման պատմութիւնէն. բայց ոչ ամ-  
բողջական գործունէութիւնը կենսի եւ գրակա-  
նութեան ապարդշներու մէջ: Յետաջայ տողերը  
նպատակ ունին ներկայացնել զինքը այս կրկն-  
պատիկ ապարդշներու մէջ նորանոր գծերով:

Վրթանէս ծագմամբ պայծառ նախարարա-  
կան տահէր է. Իւր յալքը դարերու մէջ փա-  
ռաւորուած Բազրատունեաց տնէն, որի քէլան՝  
եւ եղբայր Սմբատայ Վրկանի մարզպանին եւ Գիգ  
Դաշտակարանի տեսուն: Այսչափ ծանօթ է մեզի  
իր ծնողաց մասին, որոնք 607ին թաւալանի ի կեանս  
կը յիշատակուին: Ծննդեան թուականն որոշ  
տարուով կարելի չէ ճշգրէլ. կ'երեւայ թէ Չ դարու  
երկրորդ կիսուն տեսաւ տաւալի անգամ արեւը:

Իւր մտաւոր գաղափարները ընդունեցաւ  
Վրթանէս ապահովալու լաւ ձեռքի տակ ի Գրուին,  
որ ժամանակի գիտութեան կենդրոնն կը համա-  
րուէր Պարսկահայաստանի մէջ: Այսպէս գիտնանաւ

1 Գիտ. Թ.Ձ. 90. «Վրթանիս... քէլան որդւոյն»  
եւ էլ 109 պարզաբան «Վարգապետի քէլան», ինչպէս  
սովորութիւն էր արեւելեաց քով իբրեւ մականուն գոր-  
ծածնէ:

2 Թղթոց Գրուին մէջ ակրաթին են երեք անձնա-  
ւորութիւնքս իրարմ (Տմտ. էջ 149, 150, 151, 168, 170),  
որ կուտնէ իւր տայ երրորդութեանս մէկ ծագում ըլլալը.  
Եւ արեւմտք ալ էլ 150 յայտնապէս ալ լաւած է. Գրուոյ  
607ի կաթողիկոսընտրութեան ժողովքին ետիւսկոյտները  
կը ստորաբերն Սմբատայ, Գիկայ եւ Վրթանիս խնդրած  
ձեռնարկին. «Եւ կըրեցաք զձեռնարկս այս, եւ կըպէ ի սուրբ  
կեիղեց: Ոչ Գրուոյ, Եւ Մանսուէ Բասենոյ ետիւսկոյտս իմ՝  
աթնակցաւք հանդերձ, որոց անունքն ի վերայ յիշատա-  
կեալ են, եւ Սմբատ Վրկան մարզպան եւ տերանց զինոյ որ իւր  
Էլքորտաք հռոբէյն՝ առաջի ամենատար Երրորդութեանն,  
նախ արտէք մերովք եւ ապա մտանաւոր մերովք: Ըստ  
Մանսուէ ինչպէս որ համառօտութեան համար լաւն է  
եպիսկոպոսաց անունները յալանէ յիշէլ — «որոց անունքն  
ի վերայ յիշատակեալ են», նոյնպէս լաւն է Սմբատայ կը-  
րաց անունները, որոնք՝ Գիկ եւ Վրթանէս Շարապար  
նոյնպէս ի վերայ յիշատակուած էին յալանէ: Հանք. ԱՄ  
1909, էջ 79 չէինք նկատած այս կարծի որ կ'եսը:

3 Գիտ. Թ.Ձ. էջ 171. Եւ Հանք. անդ. էջ 79: